

ՆԱԽԻԶԵԻԱՆԻ

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Կ Ա Մ

ՆԱԽՃԱԻԱՆ

Ե. ԼԱԼԱՅԵԱՆԻ

(Նուէր Հազարեան ազգայոյս տոմի յիշատակին)

Սահմանները.—Նախիջևանի ոստիկանական շրջանը բռնում է զին Նախեւան գաւառը: Այժմ նա կազմում է համանուն գաւառի չորս ոստիկանական շրջաններից առաջինը: Այդ տեղ է գտնուում նաև գաւառի կենտրոնական քաղաքը: Սրա սահմաններն են. հիւսիսից՝ Շարուր Դարալագեազի գաւառը, արևելքից՝ Նախիջևանի գաւառի երկրորդ և երրորդ կամ Ջահրիի (Ջահուկ) և Ապրակունիսի (Երնջակ) ոստիկանական շրջանները, և հարաւից ու արևմուտքից՝ Պարսկաստանը:

Այս ոստիկանական շրջանը բռնում է 76691 դեսիաւորն և 1734 զ. սաժէն տարածութիւն¹⁾ որից՝

1) Բնակատեղի	191 դես. 1784 զառ. սաժէն.
(այս հաշւում գիւղատեղի	164 դես. 597 զ. սաժէն.
2) Գերեզմանատեղի	5 դես. 2265 զ. սաժէն.
3) Ճանապարհներ	385 դես. 101 զ. սաժէն.
4) Արտեր	20821 դես. 1092 զ. սաժէն.
5) Այգիներ	417 դես. 663 զ. սաժէն.
6) Անտառներ	83 դես. 603 զ. սաժէն.
7) Մարգագետին	660 դես. 1660 զ. սաժէն.

1) Труды закавказского статистического комитета. Земельные дачи Эриванской губернии, Нахичеванский уезд. դես և սաժէն.

8) Արօտատեղի	47720 դես.	1071 ք.	սափէն.
9) Զրի տակ	788 դես.	1799 ք.	սափէն.
սրանից 1) ջրանցք. տակ	76 դես.	2139 ք.	սափէն.
2) գետերի, վտակների և			
աղբիւրների տակ	608 դես.	290 ք.	սափէն.
10) Չարդիւնաբերող հողեր	3783 դես.	2130 ք.	սափէն.
11) Այլ և այլ տեսակի հողեր	52 դես.	1165 ք.	սափէն.

Իւր տարածութեամբ այս ոստիկանական շրջանը նոյն դաւառի չորս շրջանների մէջ երկրորդն է համարւում, իսկ առաջինը՝ Օրդուբադի ոստիկանական շրջանն է¹⁾։

Նախիջևանի ոստիկանական շրջանը բռնում է գլխաւորապէս Նախիջևանի և Բոյիւկ-դիւզի հարթութիւնները, որոնք միմեանցից բաժանւում են Հարաւային—Դարաւագետի լեռնաշղթայի վերջաւորութեան մի փոքրիկ գոտիով, որ յանկում է Արաքսին՝ Դարաշուղ գիւղի մօտ։

Բոյիւկ-դիւզի հարթութիւնը բաժանւում է Շարուրի հարթութիւնից Կըվրաղի բարձրութիւններով։ Նրա երկարութիւնն է 20 և լայնութիւնը՝ 10 վերստ։ Զուր չլինելու պատճառով բոլորովին անբերրի է։

Նախիջևանի հարթութիւնը տարածւում է Նախիջևան-չայի և Զահրի-չայի ստորին ընթացքում։ Այս հարթութեան երկարու-

1) Օրդուբադի ոստիկանական շրջանը նկարագրելիս դեռ ևս պատրաստ չէր Անդրկովկասեան վիճակագրական կոմիտեի կազմած հողերի տարածութեան վերաբերեալ վերոյիշեալ տեղեկագիրը, ուստի և ես չկարողացայ այն ժամանակ օգտուել. այժմ վրացներու յուսով կարեւոր եմ համարում այստեղ առաջ բերել։

Օրդուբադի ոստիկանական շրջանը բռնում է 102745 դես. և 2258 ք. սափէն տարածութիւն. որից՝

1) Բնականտեղի	229 դես.	138 քառ.	սափէն.
սրա մէջ գիւղատեղի	222 դես.	307 քառ.	սափէն.
2) Գերեզմանատեղի	12 դես.	1134 քառ.	սափէն.
3) Ճանապարհներ	400 դես.	470 քառ.	սափէն.
4) Արտեր	13784 դես.	2051 քառ.	սափէն.
5) Այգիներ	998 դես.	1155 քառ.	սափէն.
6) Անտառներ	408 դես.	290 քառ.	սափէն.
7) Մարգագետին	1 դես.	986 քառ.	սափէն.
8) Արօտատեղի	57925 դես.	772 քառ.	սափէն.
9) Զրի տակ	748 դես.	1427 քառ.	սափէն.
որից 1) ջրանցքների տակ	26 դես.	901 քառ.	սափէն.
2) գետերի, վտակների և			
աղբիւրների տակ	704 դես.	1237 քառ.	սափէն.
10) Չարդիւնաբերող հողեր	18383 դ.	880 քառ.	սափէն.
11) Այլ և այլ տեսակի հողեր	55 դ.	520 քառ.	սափէն.

Թիւնը Նախիջևան-չայի ընթացքով հասնում է 30 վերստի, լայնութիւնը՝ հիւսիսային վերջաւորութեան վրայ, Զահրի գիւղի մօտ 6 վերստի, իսկ հարաւային վերջաւորութեան վրայ, Ղարաչուղ և Արաղին գիւղերի միջև 30 վերստի: Հարաւից այս հարթութիւնը սահմանափակւում է Արաքս գետով, իսկ հիւսիսից՝ Թարուղաղ լեռնաշղթայի փեշերով: Այս հարթութեան մակերևոյթը կտրատւում է մի քանի քարքարոտ ձորակներով ու աննշան սարերի գօտիներով ու դազաթներով, որոնցից յիշատակութեան արժանի են հետեւեալները. Կըվրաղ-սար (2865 ոտ.), Թազիուչանի (3123'), Տուզ-դաղ (3830'), Ղարաուլ-թափա (3067'), Քիւլ-թափա (3365'), Բէիւկ-տուղ (3073'), Չընգըլլու (2753'), Ղարդաբողար (3430'), Ղարանի-հալըղ (3668'), Քիւլ-հունուր (4238'), Իւսունգիւլլասը (5670'): Այս բոլոր լեռներն էլ նստուցքային կազմութիւն ունեն ¹⁾:

Դետերը.—Այս ոստիկանական շրջանը ունի միայն մի գետ, միջանի վտակներով, և սա է, իսկապէս, ամբողջ շրջանի կենսատուն, ու սրա ընթացքով են դասաւորուած գիւղերը: Սա Նախիջևան գետն է, որի վերին հոսանքը, որ կոչւում է Ղարա-բաբա-չայ, ընկնում է երկրորդ ոստիկանական շրջանի մէջ և միայն ներքին հոսանքը պատկանում է այս շրջանին: Սկիզբն է առնում Զանգեզուրի գաւառի Արւիլլու լեռնաշղթայից և թափւում է Արաքսը՝ Ապասապատ—բերդից մէկ և կէս վերստ բարձր: Նրա ամբողջ ընթացքի երկարութիւնը հասնում է 71 վերստի: Նրա վտակներն են՝ վերին հոսանքում՝ Քիւքի-չայ, որ սկիզբն է առնում Հարաւային-Դարալագեաղի Քիւքի-դաղ և Քեչալ-դաղ դազաթների միջից, և թափւում է սրա մէջ Ղարա-բաբայ գիւղի մօտ, անցնելով ընդամէնը 18 վերստ, իսկ միւսը Զահրի-գետը, որ նոյնպէս սկիզբն է առնում Հարաւային-Դարալագեաղի լեռներից և թափւում է Նախիջևան գետի մէջ Ուզուն-Օրա-իւխարի գիւղի մօտ, անցնելով ընդամէնը 40 վերստ: Նախիջևան գետից տարուած են վեց ջրանցքներ, շրջակայքը ոռոգելու նպատակով, այնպէս որ ամառը, արդէն իսկ փոքրացած այս գետը, մինչև Արաքս չի հասնում: Վերջինս, թէպէտ և կազմում է այս շրջանի ամբողջ հարաւային ու արեւմտեան սահմանագիծը, սակայն ոռոգման դեռ ևս չի նպաստում, որովհետև առանց ջրամբարձ մեքենաների, չի կարելի ջուր բարձրացնել:

Հանքեր.—Նախիջևանի գաւառը նախ և առաջ նշանաւոր է իւր ազահանքերով:

¹⁾ Երկրաբանական կազմութեան մասին արդէն խօսելիս նք Օրդուբադի ոստիկանական շրջանն նկարագրելիս:

Նորագոյն հետազոտութիւնները ցոյց են տուել, որ Սև-ծովի գրեթէ ամբողջ մինչև Օրդուբադ քաղաքը ձգւում է աղաքարի անընդմիջւող, ստորերկրեայ մի շերտ, որ Օրդուբադ քաղաքի մօտ անցնում է Արաքսը և տարածւում Պարսկաստանի սահմաններում: Այդ շերտի վրայ այժմ գործում են հինգ աղահանքեր՝ Օլթիի, Կաղզուանի, Կոդբի, Նախիջևանի և Սուստի: Այս աղահանքերից հանած աղի քանակը միանգամայն կախուած է վաճառատեղիների թուից: Այժմ առաջին տեղը բռնում են Կոդբի և Կաղզուանի, յետոյ Նախիջևանի և Սուստի, և վերջինը՝ Օլթիի աղահանքերը):

Նախիջևանի աղահանքը գտնւում է համանուն քաղաքից 12¹ վերստ դէպի հիւսիս-արևմուտք, Արաքսի ձախ ափին, նրանից 9¹ վերստ հեռու, Դուզ-դաղ լեռան մէջ, 2949 ֆ. ծովի մակերևոյթից բարձր:

Այստեղ գտնուած քարէ մուրճերը ցոյց են տալիս, որ շահագործուած է շատ հին դարերում: Դատելով փորուածքների ծաւալով, կարելի է ենթադրել, որ մինչև այժմ հանուած է 6—7 միլիօն փութ աղ: Այժմ տարեկան միջին թուով հանում են մինչև 200 հազար փութ: Այս աղահանքը պատկանում է պետական գանձարանին և կապալով է տրուած Զանփուլատեանին 9000 ռ. այն պայմանով, որ աղահանքում աղի փութը ծախուի մեծ, հինգ և անլի ֆունտանոց, կտորները 10, խկ մանրերը՝ 5 կոպէկով:

Սուստի աղահանքը գտնւում է Նախիջևանի աղահանքից 9¹ վերստ հիւսիս, Սուստ գիւղի հարաւային կողմում: Աղային շերտը մօտ 2 սաժէն հաստութեամբ, ըստ երևոյթին, Նախիջևանի աղաշերտի շարունակութիւնն է, և միևնոյն տեսակի: Այս աղահանքից մինչև հիմայ հանուած է մօտաւորապէս 4 միլիօն փութ աղ. տարեկան հանում են մինչև 300 հազար փութ աղ: Սրան շահագործել սկսել են միայն վաթսուանական թուականներից: Սա պատկանում է Քելրալի-խանութներին և կապալով է տրուած նոյն Զանփուլագեանին:

Բացի այս յիշուած շահագործուող աղահանքերից, այս ուտիկանական շրջանում աղահանք նկատուած են և հետեւեալ տեղերում:

Այս աղահանքի մօտ՝ Կեվորչին-դուլար.— Նախիջևանի հանքից 8 վերստ դէպի հիւսիս. և Իքի-թափալար—5 վերստ դէպի հարաւ-արևելք նոյն աղահանքից. Ադ-դուզ-դաղ լեռան մէջ, Սուստի աղահանքի մօտ: Սուստ գիւղից 3 վերստ դէպի արևելք, Տաւո-դարալի կոչուած տեղում:

1) Памятная книжка Эриванской губернии на 1902 г. добыча соли в Нахичеванском уезде. Стр. 176—177.

Ազնաբերդ գիւղից վեց վերստ հարաւ-արեւելք, համանուն լեռան արեւմտեան լաշին (5858 ոտ. բարձ.):

Նախիջևանից 3—4 վերստ դէպի հիւսիս-արեւմուտք, Ղարաբաղ տանող ճանապարհից միջանի սաժէն հեռու, և 2 վերստ 200 սաժէն դէպի արեւելք Նախիջևանի աղահանքից Բահին-խան-տուղ-լաղ Բահիմ-թափա լեռան մէջ:

Նախիջևան քաղաքից 10 վերստ դէպի հիւսիս և Նախիջևան աղահանքից 12 վերստ դէպի արեւելք, Թիւլքի-թափա լեռան մէջ: Բացի աղահանքից, այս շրջանում կան նաև՝

Դիպս.— Գտնւում է Նախիջևան քաղաքի և համանուն աղահանքի շրջակայքում:

Ս'արմարիոն.— Սուրբաբ գիւղից 2 վերստ դէպի հիւսիս:

Սրաքսար.— Նախիջևանի շրջակայքում. Կարմիր-վանքի մօտ: Նեհրամ գիւղի մօտ:

Հանրային ջրեր.— Այս ոստիկանական շրջանում չկան, այլ սրա կից՝ երկրորդ ոստիկանական շրջանում՝ Բաղամու և Սուրբաբ գիւղերի մօտ, երկուսն էլ ածխաթթուային են:

Սլիման.— Ոչ քաղաքում և ոչ ամրոցի ոստիկանական շրջանում չկայ օգերեկոյթարանական կայարան, պարզ է ուրեմն, որ անհնարին է մի որոշ բան ասել: Վերջին տարիներս միայն սկսել են չափել նստոյցքները, սակայն այս ևս ոչ այնքան կանոնաւոր: Հիմնուելով մասամբ այս, մասամբ էլ պ. Նիկիտինի 1881—1882 թուականներին կատարած դիտողութիւնների վրայ, կարելի է մօտաւորապէս ասել, որ այստեղ ձմեռն սկսւում է դեկտեմբերին, ջուրն սկսում է սառչել՝ լճակներում դեկտեմբերի վերջին, իսկ գետերում՝ յունուարի սկզբին: Սառուցը լճերում և գետերում սկսում է հալչիլ փետրուարի վերջին (23—25) և անհետանում է մարտի սկզբին (6—7): Ձիւնը բաց տեղերում անհետանում է մարտի սկզբին: Առաջին փոթորիկը տեղի է ունենում փետրուարի վերջին և մարտի սկզբին, կարկուտը՝ զարնանը և շատ սա-կաւ՝ ամրանը:

Մարտի սկզբին երևում են առաջին դաշտային ծաղիկները՝ ձնձաղիկ, յակինթ, մանուշակ. կաղնին ծաղկում է մինչև ապրիլի վերջը, ուռնին մայիսի սկզբին: Այուլան (սալոր) հասնում է մայիսի կիսին, յետոյ կեռասը. թութը մինչև յունիսի 1-ը: Անձ-բենները շատ առատ են մարտի երկրորդ կիսին. ապրիլին և մայիսին, յունիսին պակասում են, իսկ յուլիսից հոկտեմբեր շատ սա-կաւ: Շոգ օրերն սկսւում են սոփորաբար մայիսի կիսից, այնպէս որ յունիսի սկզբին արդէն խոտն ու ծառերի տերեւներն սկսւում են դեղնել արեգակի կիզիչ ճառագայթների ազդեցութեամբ: Ա-

մարային ամենաշոգ եղանակը լինում է յուլիսի վերջն ու օգոստոսի սկիզբը, երբ Չերմութիւնը հասնում է մինչև 50° R.: Գիշերները լինում են սոթ, խեղդիչ և թոյլ չեն տալիս քնելու, թէպէտ և լինում են նաև շատ ցուրտ գիշերներ, երբ Չերմութիւնը ցերեկուանից 25° ընկնում է: Այսպիսի խիստ փոփոխութիւնը շատ անգամ վտանգաւոր հիւանդութիւնների պատճառ է լինում:

Ամառը Նախիջևանում տիրում է սաստիկ տենդ, որից անգամ չեն մնում ոչ միայն նորեկները, այլ և տեղացիները: Այս տենդը, ինչպէս և Չերմախտը և աչքի հիւանդութիւնները սովորական և մշտատե են ոչ միայն քաղաքում, այլ և ամբողջ Նախիջևանի հարթութեան վրայ:

Այստեղ տիրապետում են արևելեան և հիւսիս-արևելեան անձրևաբեր քամիները: Հարաւային քամիները սաստիկ տաք են և ֆեասակար:

Բացի վատաւողջ կլիմայից, թէ քաղաքը և թէ այս շրջանը ունի բազմաթիւ կարիճներ, միլիոնաւոր մոծակներ և սակաւաթիւ մորմեր (Фаланги), որոնք թունաւորում են կիանքը գարնան ու ամրան ժամանակ:

Բուսականութիւն. — Նախիջևանի ոստիկանական շրջանը բուսականութեան կողմից հարուստ չէ, որովհետև նախ շատ տեղեր աղային հանք պարունակելով իրենց մէջ, լերկ են, ինչպէս Նախիջևանի և Սուստի աղահանքերի շրջակայքը և երկրորդ՝ ջուրը շատ սակաւ է, ինչպէս օրինակ Բոյիւկ-գիւղ կոչուած ահագին հարթութիւնը, որ միանգամայն զրկուած է բուսականութիւնից:

Այս ամբողջ շրջանում չկայ ոչ մի անտառ, այլ տեղ տեղ, գետակների ափերին, ժայռերի ստորոտներում, մի խօսքով երկբազործութեան անյարմար տեղերում, բնակիչների ձեռքով տնկուած են կաղամախ, ուռենի, հասարակ կնձին (карагач, Ulmus campestris), փշատ (Zizyphus cappadocia), և այլն:

Շրջանի մեծագոյն մասը բռնուած է գլխաւորապէս ցորենի, գարու, բամբակի, կանեփի և կորեկի արտերով, մի մասն էլ բռնում են խաղողի և պտղատու ծառերի այգիները: Այստեղի խաղողներից նշանաւոր են. սև տեսակից՝ սև-խալիլի, սապելի, մալահի, սև-խաղող, սև-ալղարա և դարաջա, սպիտակ տեսակից՝ խալիլի, որ հասնում է յունիսի վերջին, ասկարի, հուսէինի, քիւրգաշտ, քիշմիշի և կատուի աչք:

Պտղատու ծառերից նշանաւոր են խնձորենին, տանձենին, ընկուզենին, նշենին, նռնենին, սալորենին, դեղձենին, ծիրանենին, փշատենին, թթենին, բալենին և կեռասենին:

Դաշտերն ու արօտատեղիները լի են ծաղիկներով, որոնցից նշանաւոր են. երկծաղիկ կակաջը (*Tulip biflora*), կոզկապեան հիրիկ կամ վայրի շուշան (*Iris caucasica*), տերեւախիտ նուարտակ (*Lepidum perfoliatum*), կրկնատերև մկնսոխ (*Scilla bifolia*), ափրիկեան երեկոյնիկ (*Hesperis africana*), մեծորակ առնասպար (*Androsace maxima*), արեւելեան կաղամբ, համոսկրի (*Holosteum umbellatum* aff.), կատուախոտ մշկունի (*Nepeta muschini*) ճանդի (*Scandix australis*), պնդատերև վալանդիա (*Valantia pymeia*), պայծառ խողելընդի (*Scrophularia lucida*), երփնագոյն զայլոտն (*Lycopus variegata*), կարճ պնդատերև աղուաւածաղիկ (*Carex stenophylla*). և այլն¹⁾:

Լնտանի կենդանիներից՝ այստեղ կան ոչխար, այծ, կով, եղ, գոմէշ, էշ, ձի և ուլտ:

Վայրի կենդանիներից՝ նապաստակ, աղուէս, այծեամ և գայլ:

Լնտանի թռչուններից՝ հաւ, և սակաւաթիւ բադ, սագ, և հնդկահաւ:

Վայրի թռչուններից՝ ճնճղուկ, բազէ, կաքաւ, լոր, բու, ծիծեռնակ, արտոյտ, արագիլ, ձկնկուլ և այլն:

Սողուններից՝ օձ, մողէս և այլն:

Միջատներից՝ սարթ, մորմ, կարիճ (սև ու դեղին), մորեխ, մեղուկ, մոծակ և այլն:

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ա.


ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Նախ քան այս ոստիկանական շրջանում իմ կատարած պեղումների նկարագրութեան անցնելը, կարևոր եմ համարում յիշել այստեղ այն մի քանի հնագիտական իրերը, որ բարեբաղդաբար ընկել են մի որևէ թանգարան, և այսպիսով կորստից ազատուել:

Բաւականաչափ հնութիւններ գտնուում են Ս. Էջմիածնի թանգարանում, որոնց մի մասը հաւաքել է Նախիջևանի նախկին յաջորդ արժ. Գրիգորիս վարդապետը, իսկ մնացածը արժ. Մեսրոպ վարդապետ Տէր Մովսէսեանը զանազան մասնաւոր պնձերից: Առաջին ժողովածուի մէջ մեծ տեղ են բռնում քարացած

1) Ալիշան. Միսական. եր. 491.

ժամակները, օձերը և ձկները, որոնցով շատ հարուստ են Կարմիր վանքի և Խրամ քաղաքի միջև ձգվող բլուրները: Այս տեղից ես ևս բաւականաչափ քարացած ժամակներ եմ հաւաքել: Արժ. Գրիգորիս վարդապետի ժողովածուն համառօտակի նկարագրուած է «Արարատ»-ի 1893 թ. 2. համարում, իսկ արժ. Մեսրոպինը բաղկացած է բացառապէս կաւէ ամաններից, դեռ ևս ցուցադրուած չէ:



ՔԱՐԷ ՄՈՒՐՃԵՐ

Նախիջևանի ազահանքում գտնուած են միքանի քարէ մուրճեր, որոնք այժմ պահոււմ են Կովկասեան և Գետերբուրգի Գիտութիւնների ձեմարանի Մարդարանական թանգարաններում: Դժբաղդարաւ այս մուրճերի հետ չեն գրտնուած ուրիշ իրեր կամ որեւէ մետաղ, որպէսզի կարելի լինէր որոշել, թէ ինչ ժողովրդի և որ դարին են պատկանում: Սակայն հաւանական է, որ բաւական հին շրջանից լինին և առնուազը


երկաթի կամ բրոնզի դարից: Պարզ երևում է, որ այս մուրճերը գործ են ածուել աղաքաբեր կտորելու համար, միայն դժուար է ասել, թէ այստեղ են շինուած, թէ ուրիշ տեղից բերուած: Սըրանք մի քանի տեսակի քարերից են շինուած, աւաղաքարից, թերթաքարից (слюда) և մանաւանդ զատաքարի (diorite) տեսակներից: Վերջին տեսակի քարերից շինուածներից շատերը կանոնաւոր ձև ունեն և շատ լաւ են կերտուած: Գտնուել են նաև տեղական, բնականից կռկուած քարեր, որոնք գործ են ածուել, փոքր ինչ կերտուելուց յետոյ: Կան և այնպիսի մուրճեր, որոնք

կոթի վրայ ամրացրուած են հիւսիսային-ուսաների, օլանեցների, զործադրած եղանակով—կոթի մէջն են մտցրուած: Ընդհանրապէս նկատուած է, որ հին աղահատներն աւելի աշխատել են օգտուել բնական քարերից, քան կուլ գործիքներ:

Պ. Պոլեակովը 1879 թուին այս աղահանքում գտել է 13: մուրճ, որոնք թէպէտ զանազան ձև ունեն, սակայն ծառայել են, միևնոյն նպատակին՝ աղաքար կոտրելու այս, Նախիջևանի, աղահանքում: Մուրճերից շատերն ունեն շուրջանակի փոսիկ, ուր թուղով ամրացրել են կոթը: Յղկած մուրճերից ամենահետաքրքրականը մինն է, որ անեղծ է մնացել, բաւական մեծ է և ծանր: Նա ունի 185 միլիմետր երկարութիւն և մինչև 120 միլիմետր լայնութիւն, միանգամայն մօտենալով ձուածիւր ձևին: Վերի մասից 40 միլիմետր ներքև առ ի շեղ ձգւում է մի ակօսածն դօտի, ուր, երևի ամրացել է կոթը, թերևս երկու երկար փայտեր, որոնց ծայրերից բռնած աշխատել են հաւանականօրէն երկու մարդ, որովհետև մուրճը 1 փութ և 2 ֆունտ ծանրութիւն ունի: Միւս մուրճը, որ գտնուել է մերգելի մէջ, աւելի լաւ է կերտուած: Նրա մի ծայրը բութ է, միւսը՝ սուր, այնպէս որ բահի է նմանուում, երկարութիւնը 230 միլիմետր է, ամենալայն մասը՝ մօտ 100 միլիմետր: Նոյնպէս ունի ակօսածն շուրջանակի փուրուածք բութ ծայրին բաւական մօտ:

Մինն էլ միանգամայն զընգի է նման, կլոր կոթ ունի, որ ձեռագործ է, և քառանկիւնի, փոքր ինչ պրիզմայանման զլուխ:

Ուշագրաւ է նաև չորրորդը՝ որ կարճ է և լայն, 140 միլիմետր երկարութեան և 100 միլիմետր լայնութեան: Ծայրը հետզհետէ սրանում է. վերան կայ երեք ակօսածն շուրջանակի փուրուածքներ:



Ես պեղումներ կատարեցի գլխաւորապէս չորս տեղ. Քիւլ-թափա, Ուզուն-օբա-աշաղա, Կարմիր-վանք գիւղերում և Խրամ աւերակ քաղաքում:

Քիւլ-թափա (Մոխրագագաթ). գիւղը, որ գտնուում է Նախիջևան քաղաքից դէպի հիւսիս-արևելք մօտ ութ վերստ հեռաւորութեան վրայ, իւր անունն ստացել է այն մոխրակոյտից, որ գտնուում է նրա արևելեան ծայրում: Սա

մօտաւորապէս 10 սաժէն բարձրութեան մի բոլորածն բլուր է, 100 սաժէն տրամագծով: Սրա մէջ նկատելի են եօթը շաքը, միմեանց վրայ դարսուած գերեզմաններ, միմեանցից 3—4 արշին բարձր: Ածխախառն մոխրի շերտը զոռշ կերպով բաժանում է գերեզմանների յարկերը միմեանցից: Գերեզմանները մանր քարերով շարուած քառանկիւնի փոսեր են, մօտ մի արշին բարձրութեան, առանց քարէ կափարիչի և հիւսիսից հարաւ ուղղած: Իւրաքանչիւր գերեզմանի մէջ գտնւում էր միայն մի կմախք, հիւսիսից հարաւ ուղղուած և երեսը դէպի հարաւ դարձրած: Շատերի մէջ լինում էին նաև զանազան ձևի պուլիկներ, և տաւարի ոսկորներ: Միքանիսի մէջ կար նաև այրուած ցորեն ու գարի: Պուլիկների մեծագոյն մասը կոտորուած էին: Նկատելի էր, որ ստորին յարկերի պուլիկները սև, իսկ վերի յարկերինը կարմիր հողից էին շինուած: Առաջինները հասարակ են և առանց նշխերի, մինչդեռ վերջինները համեմատաբար աւելի գեղեցիկ և նշխերով զարդարուած: Ուշագրաւ է մասնաւորապէս մինը, որ տափարակ է, շրջանաձև, նեղ բերանով և երկու կանթով: Մի երեսը ծածկուած է ջրգեղով (Vernis):



Առանձին ուշագրութեան արժանի է այստեղի մի գերեզմանից իմ գտած քարէ փոքրիկ ձին, որ ընդամէնը $4\frac{1}{2}$ սանտիմետր երկարութիւն և 3 սանտիմետր բարձրութիւն ունի: Նկատուած է որ որա մէջքին կերտուած է նաև թամբը: Հասկանալի է, որ ննջեցեալի հետ ձին, ինչպէս և զէնքերն ու զարդերը, թաղելու սովորութեան փոխարինել է նրա արձանը կամ պատկերը թաղելու սովորութիւնը, որ այժմ էլ տեղի է ունենում Զինաստանում: Այս սովորութեան մնացորդ է ձին ննջեցեալի յետևից մինչև գերեզման տանելու ծէսը, որ տեղի է ունենում այս կողմերի բնիկ հայերի մէջ ևս:

Գիւղացիները շարունակ քանդում են այս բլուրը և հողը տանում այգիները պարարտացնելու:


Ո՛չ միայն ես, այլ և գիւղացիներն այս տեղերից բրոնզէ իրեր չենք գտել:

Միևնոյն ձևն ու կազմութիւնն ունի նաև այն բլուրը, որ գտնւում է այստեղից դէպի արևմուտք, հազիւ չորս վերստ հեռու, Ուղուն-օբա-աշաղա և Խալիլու գիւղերի մէջ և յայտնի է դարձեալ Քիւլ-Թափա—մոխրագագաթ անունով: Սա առաջինից

աւելի քնդարձակ է, միայն նրանից աւելի ցածր: Իսկական բարձրութիւնը յայտնի չէ: որովհետեւ շրջակայ գիւղացիները շարունակ քանդել են ու քանդում են ու հողը տանում արտերը պարարտացնելու:

Համեմատաբար աւելի նոր ժամանակի են Ս. Ստեփանոսի կամ Կարմիր վանքի մօտ իմ պեղած գերեզմանները: Կարմիր վանքը զետեղուած է այս ուստիկանական շրջանի հարաւ-արեւմտեան սահմանում, Արաքսի ափին, Նախիջևանից մօտ քսան վերստ հեռու: Գերեզմանները գտնուում են վանքից արեւմուտք մօտ 50 սաժէն հեռու, մի փոքրիկ հարթութեան վրայ: Գերեզմանների վրայ թմբեր չկան, ճշ էլ գերեզմանաքարեր, նկատելի են միայն հիւսիսից հարաւ ձուածիք շարուած փոքրիկ քարեր: Այս շրջանակների մէջ մօտ երկու արշին խորութեան փորելուց յետոյ բացուում էին գերեզմանները, սրանք բոլորն էլ միատեսակ էին, բոլորն էլ ուղղուած հիւսիսից հարաւ, բոլորն էլ գրեթէ միեւնոյն երկարութեան,—3 արշին, միայն տարբեր լայնութեան 1—2¹/₂ արշին: Գերեզմանի չորս կողմը 1—1¹/₂ արշին բարձրութեան քառանկիւնի պատ էր քաշուած անտաշ, փոքր քարերով, ամբողջովին հողով լցուած էր ու վերան՝ փոխանակ սաւաքարի՝ փոքր ինչ մեծ քարեր էին դրուած: Իւրաքանչիւր գերեզմանում լինում էր 1—3 կմախք, բոլորն էլ հիւսիսից հարաւ ուղղուած, մօտերը կաւէ զանազան ամաններ: Կմախքները սաստիկ փթել էին, այնպէս որ հնարաւոր չեղաւ ամբողջ զանգեր վերցնելու, սակայն որքան կարելի եղաւ նկատել, մեծ մասամբ միջազուլ էին:

Կաւէ ամանները կարմրաւոյն են, բաւական լաւ շինուած: Առանձին ուշադրութեան արժանի են թասի նմանութիւն ունեցողները և մանաւանդ սրանցից մինը՝ որ կանթ ևս ունի: Աւելի



ուշագրաւ է մի ուրիշը՝ որ կնդակի նմանութիւն ունի, 20 սանտիմետր բարձրութեան և 8 սանտիմետր տրամագծով: Հաւանական է, որ խմիչքներ խմելու համար գործածուած լինի:

Կարմիր-վանքից հագլւ հինգ վերստ դէպի հարաւ, անմիջապէս Արաքսի ափին, այնտեղ, ուր այժմ

գտնուում է Նհրամի պահակատունը, երևում են նախկին Խրամ քաղաքի հետքերը.—մի եկեղեցու հիմքը և մի քանի գերեզման: Թողնելով քաղաքի տեղադրութիւնն ու պատմական անցեալը

տեղագրական բաժնի մէջ անելու, ես առայժմ բաւականանում եմ ասելով, որ այստեղ ևս ես պեղումներ կատարեցի, սակայն շատ քիչ բան գտայ.—մի քանի դատարկ կարամներ, որոնք հաւանօրէն գործ էին անուել զինի կամ մի ուրիշ հեղուկ պահելու համար, մի աղիւսի կտոր, որի վրայ կայ մի մարդու բարձրաքանդակ, շատ նախնական կերպով կերտուած, մի քանի կաւէ ամաններ և իւր տեսակում դեռ ևս միակ՝ մի փաղոս (Ֆալիւս)։ Ի նկատի առնելով, որ թէ հին և թէ միջին դարերում



գրեթէ ընդհանրացել էր բնութեան և մարդու ստեղծագործող ուժի պաշտամունքը, որ ծննդական գործարանի թէ հսկայական և թէ մանրիկ ձևակերպութեան երկրպագութիւնը սաստիկ տարածուած էր Եգիպտոսում, Ասորեստանում, Պարսկաստանում, Փոքր Ասիայում, Յունաստանում, Իտալիայում, Մեքսիկայում և որ մինչև անգամ այժմ մնացել են Իտալիայի շատ տեղերում և Ֆրանսիայում անհետացել են միայն Ժէ. դարի սկզբին, ես ենթադրում եմ, որ Հայաստանում ևս այդ պաշտամունքը զոյգութիւն է ունեցել և այժմ էլ կան բաւականաչափ կոթողներ, սովորութիւններ և նախապաշարմունքներ, որոնցով կարելի է այդ ապացուցանել, ուստի և ես մտադիր եմ մօտիկ ապագայում առանձնապէս և ընդարձակօրէն զբոյս այդ մասին։ Այս պատճառով և՛ զանց եմ աւանում այստեղ նկարագրելու այդ չափազանց կարևոր հնագիտական իրը։

Բ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Բաղարական զարգացում.—Այժմեան Նախիջևանի ոստիկանական շրջանը, որ կազմում է Երևանեան նահանգի Նախիջևանի գաւառի մի մասը, հնումը կոչւում էր Նախնաւան կամ Նախօւսւան, երբեմն Նախշուան և վերջերս՝ Նախիջևան։

Յոյները կոչում էին Նաքսուանա¹⁾, որ Նախնաւան ձայնի փոխադարձութիւնն է, արաբներն անուանում էին Նեօուի, Նեփիլի և կամ Նաօուա, թուրքերը Նագօիմիհան, որ ստուգաբանւում էր իբր նկար կամ ծաղիկ տիեզերքի, պարսիկները Նախնիվան, իսկ առանհրաժեշտ Նախիջևան։

1) Պտղոմէոս Ե. 13.

Այս երկրի ու քաղաքի հետ կապուած է մի աւանդութիւն, որի հիման վրայ միջանիսին հաճելի է եղել ստուգարանել երկրի անունը, որպէս թէ Նոյը տապանից դուրս դալուց յետոյ ունեցել է իբր Նախ իջեւան այս երկիրը, որի պատճառով և այդ կոչուել է Նախիջևան: Այսպէս Ղազար Զահեդեան (յետոյ կաթողիկոս) գրում է. «1539 ամի աշխարհի շինել Նոյի զՆախիջևան: Իսկ Նախանը աւելի ճոխացնելով ասում է. «Յետ համատարած ջրըհեղելին նախկին քաղաքն Հայոց եղև Նախջուան, զի եղև նախկին իջևան Նոյեայ և որդւոց նորա, և կամ նախկին աւան եղև շինեալ յորդոցն Նոյի. և զի անտի իջին ի չուել ընդ այլ մասունս աշխարհի և անդ ասի լինել գերեզմանն Նոյի»: Այս աւանդութիւնը յիշում է նաև Յովսէպոս երրայեցին, ասելով թէ. հայերն այդպէս են աւանդում և այդ տեղը Արովադիւրիոն, այսինքն իջևան, անուանում:

Աւելի ծաղրելի է Վիլլոզ քարոզչի ստուգարանութիւնը, որ իրեն ասելով հայերից է լսել. իբր թէ Նոյը չուանով չափել է յատակատեղին և շինել քաղաքը, որի պատճառով և կոչուել է Նախ-չուան¹⁾:

Նախճաւանն սկզբում պատկանել է Վասպուրական աշխարհին, թէպէտ և իւր բնական դիրքով կցորդուած է Սիւնեաց աշխարհի հետ և Վասպուրականից բաժանուած է Արաքս գետով: Գլխաւորապէս այս բնական դիրքը և մասամբ քաղաքական հանգամանքները պատճառ են եղել, որ Ը. դարի սկզբին այս գաւառը անցել է Սիւնեաց աշխարհին և թէպէտ Թ. դարի վերջին Արծրունեաց կողմից յետ է պահանջուել, սակայն յետ չէ տրուել:

Ազգային մատենագիրներէց ամենահին տեղեկութիւնը այս գաւառի մասին տալիս է Մովսէս Խորենացին, ասելով որ Քրիստոսից վեց դար առաջ, Նրուանդեան Տիգրանը «Անուշին, Աժդահակի առաջին կնոջը և նրա ազգից ուրիշ շատ աղջիկներ պատանիներով և ուրիշ գերիներով, տասն հազարից աւելի, բնակեցրեց մեծ սարի արևելեան կողմում մինչև Գողթնի սահմանները... մինչև Նախիջևան ամրոցը: Նոցա տալիս է նոյնպէս երեք քաղաքներ՝ Խրամ, Զուղա և Խոշակունիք, իսկ գետի միւս կողմից տալիս է բոլոր դաշտը, որը սկսւում է Աժդանականից մինչև նոյն Նախճաւան ամրոցը²⁾»:

Մարական այս ժողովուրդն աճելով տարածուել է նաև Շարուր և կազմել մի զօրեղ նախարարութիւն Մուրացան անունով,

¹⁾ Voyage d'un missionnaire եր. 192. յիշ. Ալիշան, Միսական եր. 497.

²⁾ Մովսէս Խորենացի Ա. գլ. Լ. Թրգմ. Ստեփանէի:

որ Վաղարշակի կարգադրութեամբ թագաւորի երկրորդն է դարձել: Առաջնակարգ տեղ բռնելով թէ Երուանդի և թէ, մանաւանդ, Արտաշէս Բ. թագաւորութեան ժամանակ, ունենալով Արգամի պէս մի նշանաւոր նահապետ, այս նախարարութիւնը սոսկալի ջարդ է կրել Արտաշէսի որդի Արտաւազդից, որ չըսակականացաւ խնդով Մուրացան ազգից երկրորդական պատիւնը, խլեց նոյնպէս Նախճաւանը և Երասխի հիւսիսում գտնուած բոլոր գիւղերը... Արգամի որդին չկարողանալով սրան համբերել, ընդդիմանում է նրան պատերազմով, բայց արքայորդին յաղթում է և ջնջում Արգամի բոլոր ծնունդներն նրանց հօր հետ, որոնք միանգամայն երևելիներ էին Մուրացան ազգից և իրան առնում է նրանց բոլոր գիւղերն և բոլոր իշխանութիւնը: Եւ նրանցից ոչ ոք չապրեց բացի միքանի աննշան մարդիկներից, որոնք Արտաշէսի մօտ փախչելով, արքունի դրան պահուեցան մնացին¹⁾»:

Որքան և՛ կասկածելի լինին վերոյիշեալ պատմական տեղեկութիւնները, այնուամենայնիւ այդպիսի աւանդութիւնների կազմուիլն անգամ ապացուցանում են, որ այդ կողմերը սահմանակից և նոյն իսկ մասն կազմելով Փոքր Մարբին, մեծապէս ենթարկուել են մարական ազդեցութեան և այդտեղ եղել է մարական մի մեծ գաղթականութիւն, որ բռնել է նոյն իսկ Շարուրի դաշտը, ապացոյց՝ Գողթան երգերը՝ որ Արտաշէսի որդի Արտաւազդի մասին ասում են. «Անց գնաց և շինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ» (Խոր. Ա. գլ. Լ.), իսկ Խորենացին վկայում է, որ Մարակերտ է թի դաշտին, որ անուանեալ կոչի Շարուրայ: Բիւզանդը ևս յաճախ այս կողմերին կոչում է. «Երկիրն Մարաց (Դ. գլ. իդ.), աշխարհն Մարաց (Դ. գլ. Ծ.), կողմանք Մարաց (Ե. գլ. Ծա.):

Եթէ հաւատարու լինենք Փաւստոս Բիւզանդին, այս կողմերում հրէական մի մեծ գաղթականութիւն ևս եղած պիտի լինի, որովհետև նա պատմում է, թէ Շապուհ Արշակ Բ. ի ժամանակ առաւ նաև Նախճաւանը, և շէրեայ երգս վեշտասան հազարս անտի խաղացուցին գնացուցին²⁾: Սակայն այս աւերումը վերջնական հարուած չէ տուել քաղաքին, նա շուտով բարձրացել է, շնորհիւ իւր դիրքի, որովհետև գտնւում էր Պարսկաստանի և Հայաստանի, այսպիսով և՛ Հնդկաստանի և Փոքր Ասիայի ճանապարհի վրայ: Սակայն միևնրոյն այդ դիրքը պատճառ է եղել բազմաթիւ հարուածների, այսպէս՝ է: զարում Հերակլ Յունաց կայսրը Պարսկաստան արշաւելիս աւերել է այս քաղաքը և սրա սահմանները, յետոյ երբ Արաբացիներն ոտք են դրել Հայաս-

1) Մ. Խոր. Բ. գլ. ԾԱ. Թարգմ. Ստեփանէի:

2) Փաւստոս Բիւզ. Դ. գլ. ԾԵ.



Ներսէս Կաթողիկոս Երեւանի:

Нерсесь V. католикосъ
всѣхъ армянъ

Nersès V. patriarche de
tous les arméniens.



Л. Е. Лазарянъ.

Л. Цокуртъ.


L. E. Lazarian.



Переселеніе 40,000 армянъ
изъ Персіи въ Россію
подъ распоряженіемъ
Л. Лазаряна. въ 1828 г.

40,000 պարսկանայերի գաղ-
րակամութիւնը Ռուսահա-
յասան Լ. Լազարեանի
կարգադրութեամբ 1828 թ.

Transmigration de 40,000
arméniens de Perse en Russie
sous les ordres de Lazarian
en 1828.



г. Нахичевань.

Նախիջևան քաղաք

Ville de Nakhitchévan

տան, «յաւարի առին զՄարս, զԳողթն, զՆախնաւան»։ Սրանից յետոյ աւանը մեծանալով դարձել է քաղաք և եղել Վասպուրականի Ոստան, յետոյ Արարացի ոստիկանների գլխաւոր կայաններից միերը։

Ը. դարի սկզբին, այն է 705 թուին, Մահմէտ ոստիկանի հրամանով Կաշմ հրամանատարը, «որ ի կողմանս Նախնաւան քաղաքի, ետ կոչել առ ինքն զնախարարս Հայոց, նոցին հեծելովք, իրբն պատճառանօք եթէ անցուցանել ի համարու արքունի, և առնուլ հողք և դառնալ Եւ նոքա ըստ օրինի պարզամտութեան իւրեանց՝ հաւատարիմ համարեալ զնենդութիւն զաղտատոյր որսողացն, վաղվադակի անդր հասանէին. իրբն ժողովեցան անդր, հրամայեցին յերկուս բաժանել զնոսա. զոմանս (800 ոգիս) հաւաքեցին յեկեղեցին Նախնաւանու, և զկէսն (400 ոգի) յուղարկեցին յաւանն ի Որամ, արկանէին յեկեղեցի նորա, կարգեալ ի վերայ պահապանս... հանին արտաքս զաղտատոմս յարգելանէն. և զորս ի սրբարանն արգելեալ էին՝ հրակէզ արարին. և տոշորէին ի յարկան տատուածային խորանին»¹)։ Ապա մնացած ազնուականներին նենդութեամբ ու խաբէութեամբ կողոպտելուց յետոյ, սրի ու կախաղանի մատնեցին։ Այս սոսկալի եղեռնագործութեան տարին Արարացի պատմագիրները այլման կամ հրդեհի տարի են կոչել։ Այս կոտորածից յետոյ Նախնաւանը իւր սահմաններով Սիւնեաց աշխարհի մասն է գրուել։ Նոյն կոտորածներն ու աւերութիւնները շարունակուել են մինչև Թ. դարը, երբ Բագրատունիք զօրանալով Նախնաւանն էլ նուաճել են, և Սմբատ Ա. նուիրել է այն Սիսական Սմբատ իշխանին, ըայց Գագիկ Արծրունին խնդրում էր իրեն դարձնել, «իբր թէ ի հաւու և ի հօրէ նոցունց իսկ տան և ազգի պատշաճեալ և նուաճեալ ունէր զնաք, սակայն Սմբատ Ա. չէ կատարել նրա խնդիրը, և սա զբողոքելով՝ Յուսուփի ձեռնառութեամբ թագ է կապել և այնչափ չարիք հասցրել թագաւորին ու կամայ թէ ախամայ պատճառ եղել նրա սպանման։ Սակայն այս քաղաքը երկար ժամանակ չէ մնացել Սիւնեաց իշխանների ձեռքում, որովհետև թագաւորի նահատակութիւնից յետոյ տեսնում ենք, որ Յուսուփի փոխանորդ Նսրըն է այդտեղ նստել և այնուհետև դա դառել է արարացի կուսակալների ընտկատեղի, թէպէտ և ճշ միշտ այդտեղ էին մնում։ Սակայն հայերի թիւը, ինչպէս երևում է, այս կողմերում այնքան էլ չի պակասել, որովհետև Ժ. և ԺԱ. դարերում այս կողմերում եղել է մինչև 800 եկեղեցի»²)։ Այս ժամանակներում

¹) Ղևոնդ պատմիչ. գլ. Ժ.

²) Բիւպրիւք քարոզիչ, որ անցել է այս տեղով 1254 թուին։

Մաղարդայ վանքի կոնդակներից մինում, որ գրել է Քաչիկ կաթուղիկոսը 976 թուին, սա նրա թեմում կոչում է. «առաջին հոյակապ եւ հուշակալու Մայրափաղաֆն Նախչաւան¹⁾», որ քիչ յետոյ յիշում է նաև Սարգիս կաթուղիկոսը իւր կոնդակում իբրև ղիճակ Սիւնեաց մետրապօլիտ, որը երբ երկու աթոռի բաժանունց՝ Նախճաւանը Վայոց ձորի և Ծահուկի հետ մնաց Նորավանից աթոռակալին ղիճակ ԺԲ. դարից մինչև ԺԳ. դարը:

Այստեղ Անին առնուելուց յետոյ Ալի-Արսլանը 1065 թուին ժողովել է բոլոր ամիրանների և նուաճած իշխանների զօրքերը և արշաւել դէպի Վրաստան:

ԺԲ. դարի սկզբում Եախարմիշ անունով մինն է եղել Նախճաւանում իշխող, որից առել է Մելիք շահի որդի Ղլասեասին 1107 թուին. սրա որդի Մելիք-Թողթուլը այդտեղից հալածուել է Քաղցաց ասպատակներից 1121 թուին: Այս Սէլուկեան սուլթանների ժամանակ Նախճաւան գաւառը արքունի գանձարանին 115, 000 դենար ոսկի հարկ է վճարել, ինչպէս աւանդում են արաբացի պատմագիրները, իսկ առաջ, երբ Վասպուրականի մայրաքաղաք էր, այդ նահանգը վճարել է Ամիրապետների արքունիքին 4,000,000 դրամ (տիրէմ), դարձեալ արաբացի հին պատմագիրների տաւրով:

ԺԳ. դարի կիսում այստեղ, Նախճաւանում, նստող Ատերպատականի կողմնակալների մէջ նշանաւոր է եղել Նիկիուզ Ա., որ տիրել է նաև Գանձակին և այլ կողմերի և որովհետև սա Թագաւորեցրել էր Պարսկաստանի վրայ Ասլան-շահին, ուստի և կոչուել է Աքաբէկ (Թագաւորահայր կամ Հայրազուխ), որից և նրա յաջորդները նոյն կերպ են անուանուել և ինքը համարուել է Պարսից ամբողջ Թագաւորութեան հազարապետ: Սա նուաճել է նաև Սիւնեաց այլ կողմերը, Բաղաց Թագաւորութիւնը ընկնելուց յետոյ: Սրա յաջորդ և որդի Փանլաւանը (1173) գթացել է Լիպարիտ Օրբելեանի որդի Նիկիումին և նրա խնդրի համեմատ տուել է նրան Երնջակ և Ծահուկ գաւառներն ու Քալասարհը Նախճաւանում: Հաւանօրէն մինչև Թաթարների աշխարհակալութիւնը Նախճաւանը մնացել է Նիկիուզեան Աթաբէկների ձեռքը: Այս Թաթարների տիրապետութիւնից փոքր ինչ առաջ, նրանցից փախչելով ձեւղեքսին խորագմ Շահը այստեղ ևս մեծամեծ աւերածութիւններ է գործել, և այդ ժամանակ է, կարծէք, քանդուած եկեղեցիներից շատ շատերը, որոնց մասամբ վերականգնել է փոքր ինչ յետոյ Ռաբան Արա Ասորին:

¹⁾ Ալիշան. Սիսական եր. 499.

ԺԳ. դարի վերջին, երբ Թաթարաց պետութեան մէջ ղզոթութիւններ են ընկել, Ղազան խանի որդի Նաւուզը հրամայել է առհասարակ քակել ամենայն եկեղեցի և կողոպտել ամեն մի քրիստոնէի ու թլպատել բոլոր պատահած քահանաներին, ի միջի այլոց սա կողոպտել է տուել և զնախնականու եկեղեցիս, (ուր) և գերեցին զքահանայս, և բազում չարչարանս անին ի վերայ. քարշեցին զգրունս քաւարանացն, ընկեցին և զսեղանսն. բայց մեծ գլխաւորն ոչ թողացուցին քակել գեկեղեցիսն, ակն անկալ ի վրայ զօրացն. կողոպտեցին և զվաներն որ ի գաւառին Նախնականու¹⁾;

Սրանից յետոյ էլ այս քաղաքը շատ անգամ աներուել է, այսպէս՝ Ազախու (Ազովի) Թաթարներից, Լէնկթիմուրի արշաւանքից առաջ, ի վրէժ ձելայիբեան Անմէտ սուլտանի, որ նահապետի էր նրանց Թազաուր Թօխդամիշ խանի դեսպանին և սա ուղարկել էր ձանիպէկ զօրավարին, որ ասպատակ էր սփռել Նախնականում և Սիւնեաց ամբողջ երկրում, Հազիւ մեկնել էր նա, եկել է Լէնկթիմուրը, իւր հրոսակներով, և ապա անցնելով Պարսկաստան և Աւրպատական, ուղարկել է Նախնականի սահմանները (1386) էլիսա Խօնայիմ հետամուտ լինելու ձելայիբեան Անմէտ սուլտանին, որը և Ազահանքի մօտ կռիւ տալուց յետոյ խոյս է տուել, սակայն քաղաքում շատ արիւնհեղութիւն և հրկիզութիւն են եղել, որոնց հետ և՛ Զիա-էլ-մուլք կոչուած արքունի ապարանքն էլ այրուել է մի զօրավարի վրէժխնդրութեամբ, որին անպատուել էր քաղաքապետը և 15 հոգի էլ պալատի մէջ հեղձամահ են եղել:

Այս սարսափելի ժամանակներում ներքին խռովութիւններն էլ մի կողմից տանջում էին հայերին: Այստեղ հաստատուած էր Միւսաբնոզաց եպիսկոպոսական աթոռ, որ շարունակ կուռւմ էր Լուսաւորչականների հետ:

1499 կամ 1500 թուին պարսից Թազաուրութեան նորոգող Շահ Իսմայիլը Նախնականի դաշտում ցարդել է Ուզուն Հասանի թոռն էլվէն շահին: Իսկ յաջորդ ԺԶ դարում, ինչպէս և նրանից յետոյ, պարսից և օսմանցոց պետութիւնների հաստատման և զօրանալու ժամանակ, ուրիշ քաղաքների հետ Նախնականն էլ կռուի և աների վայր է դարձել, ինչպէս նոյն դարի կիսին (1554), սուլթան Սուլէյմանի արշաւանքի ժամանակ, որ համարեա անպատասցրել է քաղաքն ու նրա շրջակայքը հինգ օրուայ տարածութեամբ, ինչպէս ժամանակակից մի հայ ազգու համառօտու-

¹⁾ Ստ. Օրբ. Հ.

Թեամբ պատկերացնում է- Հայոց թվին ՌԲ. (1553-4) Խոնդ քարն երեկ ի Նախնականն. այրեաց, քակեաց, հրձիգ արարաւ, եւ ինքը սուլթանն էլ գրել է Ֆրանսիացոց Հննրիկոս Բ. Թագաւորին, թէ Շահն շէյխը առաջի յաղթական բանակաց մերոց զգահ իւր (ի Նախնականի) և զապարանս, որք յայրեաց յաւեր դարձան, մինչև չմնալ հետոց անգամ. քանզի զամենայն շէն բնակութեան քանդեցաք և հրկէզ արարաք շուրջ զՆախնականաւ, որոց և նշմարք անգամ ոչ երեւցին։ Սակայն շնորհիւ իւր դիրքի, կարճ միջոցում նորից Նախնականը վերականգնել է, և եւրոպացի վաճառականները յիշում են նրան որպէս մեծ շահաստան, հարուստ բազմաթիւ շտեմարաններով¹⁾։ Բայց շուտով սկսուել են Շահ-Աբասի աւերիչ պատերազմները ժէ դարի սկզբին, երբ Ալի-փաշա անոնով մինն էր Նախնականի կուսակալը։ Սրա վրայ Շահ-Աբասն ուղարկել է (1603) Զիւլֆ-դար խանին, սակայն մինչև նրա հասնելը՝ օսմանցիներն ահաբեկուած թողել են քաղաքը և փախել Երևան։ Բայց երբ սրանց Զիւլ-օղլի սպարապետը եկել է, պարսիկները նոյնպէս թողել փախել են. այն ժամանակ Օմար աղա անունով մինը օսմանցիների կողմից եկել է պահպանելու քաղաքը։ Կարճ միջոցից պարսիկները զօրեղանալով վերադարձել են, և Շահ-Աբասից ուղարկուած Ամիրգիւնէ խանը պատերազմել և սպանել է Օմարին, կոտորել նրա զօրքերը, ինքը նստել է նրա տեղը։ Ենոյն շահը յետ ոչ բազում ամաց, շարունակում է Առաքել Դաւրիժեցին, լուեալ ամբաստանութիւն զբնակչաց քաղաքին՝ հրամայեաց արտասահման առնել, վարել տանել ի քաղաքն Փահ-րապատ. և զքաղաքն Նախշուան աւերել, զտունսն և զամենայն շինուածսն քանդել, և զայդեստանսն կոտորել. որ անխափան կատարեցաւ առ նոսա հրաման թագաւորին, զի զամենայն բնակիչսն հանեալ վարեցին ի Փահ-րապատ. իսկ ի բնակչացն Նախշուանայ արք անշահաք և սինքորք փախուցեալք ի շրջակայ գիւղորայսն՝ Թաքեան աստ և անդ²⁾։

Մի անգամ էլ վերականգնեց քաղաքը և դարձաւ պարսիկ խաների բնակավայր, բացի մի կարճ ժամանակամիջոցից, երբ նրան տիրեցին օսմանցիները։

ԺԸ. դարի առաջին քառորդին, Մահմուտ խանի բնակալութեան միջոցին, օրինաւոր ժառանգ Շահ Փանալի խոյս տալով ապաստանել է այստեղ, Նախնականում, և այստեղից ուրիշ

¹⁾ Այսպէս՝ Վենետիկից պատգամաւոր Ալեսսանդրի 1571 թ. Նիւպորի անդդիացին 1581 թուին և ուրիշներ։

²⁾ Առաքել Դաւրիժեցի։

տեղեր: Այդ ժամանակ այստեղ խան է եղել Ասլամազ Ղուլիճ, որի վրայ եկել է Դուլիբ-բեկը 6000 հայ կարիճներով և կռուելով նրա 12—14000 զորքի դեմ, յաղթել է ու փախցրել: Սակայն երբ հայերը 3 ժամ շարունակ նրանց հետևելուց յոգնել են ու թուլացել, պարսիկները յարկարժակի յետ են դարձել և փախցրել հայերին, որոնցից շատերը շտապով դետն. անցնելիս՝ խեղդուել են: Այս պատերազմում պարսիկները սաստիկ թուլանալու պատճառով օսմանցիք առանց պատերազմի առել են Նախնաւանը: Սակայն մի կարճ միջոցից Նազիր-շահը կրկին խլել է օսմանցիներին ձեռքից և խան կարգել (1735) Վելի-Ղուլի խանի՝

1791 թուին Շուշու Իբրահիմ խանը իւր 800 և լեզգիներին Ուման-խանի 12000 զինուորների հետ յարձակուել է Նախոււանի վրայ, չաւերեցին զքաղաքն և պաշարեցին զքերդն. մինչև ժոյ աւուրս¹⁾: Նախիջևանի խանը թէպէտ սաստիկ նեղուել է, սակայն չէ յանձնել բերդը, մինչև որ իւր աներ՝ Երևանի Մահմէտ-խանը մեռացած Խոյի խանի հետ օգնութեան է հասել, և միջանի հարիւր լեզգիներ սպանելով՝ ստիպել Իբրահիմ խանին՝ յետ դառնալու Շուշի:

Հինգ-տարի յետոյ այն է 1796 թուին, Աղա-Մահմատ խանը կասկածելով այստեղի Քալբալա խանի հաւատարմութեան վրայ, երկու աչքը հանել է տուել:

Այսբան կոտորածները, բռնի և կամաւոր զաղթականութիւնն անչափ նուազեցրին այս մարդաշատ քաղաքի բնակիչների թիւը, այնպէս որ անցեալ դարի սկզբին քաղաքում 156 չ) և սրա ամբողջ գաւառում 533 գերդաստան միայն կային: Այս պատճառով և՛ զուցէ մարէր այստեղ հայութիւնը՝ եթէ մի մեծ զաղթականութիւն չգար վերակենդանացնելու նրան: Այս զաղթականութիւնը տեղի ունեցաւ Պարսկահայքից 1828 թուին Ղազար Լազարեանի առաջնորդութեամբ, գլխաւորապէս հետևեալ պատճառներով:

ա.—Պարսկահայ ժողովրդի վերին աստիճանի անապահով և սաստիկ ճնշուած դրութիւնը:

բ. Հայերի դէպի ռուսական կառավարութիւնը տածած անսահման վստահութիւնը³⁾:

1) Դիւան Հայոց պատմ. գիրք Ա և Բ. եր. 25—26 և գիրք Դ. եր. 571.

2) Обозрѣніе Россійскихъ владѣній Закавказомъ. Спб. 1836 г. IV стр. 382 և 317.

3) Խոյում հայերը բարձրացնում էին իրենց երեխաներին և բացականչում, թէ պատրաստ են սրանց էլ զոհելու, միայն թէ

գ.—Ներսէս արքեպիսկոպոսի (յետոյ կաթողիկոս) և Ղազար Լազարեանի հեղինակաւոր միջամտութիւնը:

դ.—Պարսկահայերի ուսմանը ջոյց տուած օգնութեան և համակրութեան համար պարսից կառավարութիւնից և ժողովրդից սպասուած վրէժխնդրութեան երկիւղը 1):

Երբ 1827 թուի ուսու-պարսկական պատերազմի ժամանակ ուսաց զօրքը յաղթանակով յառաջ էր շարժուած՝ մեծապէս օգտուելով հայերի ջերմ համակրանքից, ընդհանուր զօրքի հրամանատար կոմս Պասկևիչը խնդրեց կայսեր՝ որ հայերի մէջ ահազին հեղինակութիւն և համակրանք վայելող Լազարեան տոհմից Ղազարին ուղարկէ իւր բանակը, որպէսզի նրա միջոցով ուսմանն աւելի մեծ համակրանք ձեռք բերեն հայերի մէջ. Եւ երբ նրա խնդիրը յարգուեց և Ղազար Լազարեանը գալով Նախիջևան, էրիտտով զօրապետի բանակի հետ արշաւեց դէպի Ատրպատական, Քաւրիզի դռներն առանց պատերազմի բացուեցան նրա առաջ, որովհետեւ Քաւրիզի բազմաթիւ հայերը համոզեցին պարսիկներին անձնատուր լինել: Եւ որովհետեւ ուսաց կառավարութիւնը մտադրուել էր Ատրպատականի հայերին գաղթեցնել Արաքսի ձախ տփը, որ հաւանականօրէն պիտի մնար իրեն, ուստի և Պասկևիչը Ղազար Լազարեանին նշանակեց Քաւրիզի քաղաքապետ, ցանկանալով նրա միջոցով դիւթել Ատրպատականի հայերին գաղթելու ուսական մասը: Ինքը Ղազար Լազարեանը լինելով այն տոհմի զաւակ, որին բռնութեամբ պարսիկները գաղթեցրել էին հին Զուղայից Նոր Զուղա, և որը տեսել ու կրել էր պարսից բոլոր բռնութիւններն ու Ռուսաստան էր տեղափոխուել (1750 թ.) հանգիստ և ազատ գործունէութիւն որոնելու, ահա այս տոհմի զաւակը չէր կարող չհամակրել Պարսկաստանից Ռուսաստան գաղթելու գաղափարը, մի գաղափար, որ ինչ պակաս ոգևորում էր և Ներսէս արքեպիսկոպոսին, որ ամէն կերպ օգնում էր ուսմանը, տենչալով ստեղծել մի հայկական աշխարհ: Ահա և այս պատճառով, երբ Ներսէս արքեպիսկոպոսը նկատելով, որ պարսիկները Քաւրիզի առման պատճառով հաշտութիւն են խնդրելու, միջանի նամակներ գրեց Ղազար Լազարեանին, և խնդրեց, որ նա միջնորդէ Պասկևիչին, որպէսզի հայաբնակ գաւառներն աշխատեն

ուսաց թագաւորի հովանու տակ ապրին (ԱКТЫ Археогр. Ком. VII кн. 651).

1) Կոմս Պասկևիչը գրում է Ապաս-Միրզին, որ ճակատակ դաշնագրութեան՝ հալածում են ուսմանը պատերազմի միջոցին օգնողներին և մինչև անգամ ամբողջ միւսին քարկոծել է: (ԱКТЫ Археогр. Ком. VII кн. 614).

ընդ միշտ ազատ պահել պարսից տիրապետութիւնից, իսկ եթէ սահմանն Արաքսը պիտի լինի՝ այն ժամանակ դաշնադրութեամբ պէտք է պահանջել, որ ըստ պարսկահայերն իրաւունք ունենան գաղթելու Ռուսա-Հայաստան: Հակառակ դէպքում հայերը կը մատնուին պարսից անողորմ վրէժխնդրութեան, որովհետեւ նրանք բացարձակապէս ցոյց էին տուել իրենց համակրանքը ռուսներին և կարելոյն չափ օգնել էին նրանց:

Այս մասին Լազարեանը պատասխանում է Ներսէսին 1827 թ. հոկտ. 28-ին. «Ձեր ինչ գրկալ էիք ինձ վասն սիրելի մեր ազգին և սահմանաց երևանայ՝ ես նորին բարձր գերազանցութեան վասն այս խօսեալ եմ, որ ասաց ինձ թէ միտքն և դիտաւորութիւնն իւր կայսերական մեծութեան նոյն է. նա ևս ինքն նորին գերազանցութիւնն հետեւելոց է այս բանին լաւապէս կատարելու ևս իմոյս կողմանէ ինձ առաջին և սուրբ պարտաւորութիւն կը համարեմ, այն է՝ որ լինիմ օգուտ ազգին մերոյ»¹⁾:

Զնայելով, որ դաշնադրութեան կայսրից նախապէս հառաատուած նախագծի մէջ արդէն մտել էր Պարսկաստանի քրիստոնեաներին Ռուսաստան գաղթեցնելու կէտը, այնուամենայնիւ Ներսէս արք-եպիսկոպոսն այդ մասին տեղեկութիւն չունենալով և չբաւականալով Լազարեանին գրած նամակներով, 1827 թ. դեկտեմբերին գրեց իրեն Պափկեիչին, թէ հարկ է գաղթեցնել հայերին պարսից սահմաններից ռուսաց նոր նուաճած երկիրը և թէ այդ նպատակով նա ուղարկում է Մնովքեան Ստեփանոս եպիսկոպոսին և զարաբաղցի Նիկողայոս վարդապետին, որպէս զի սրանք համոզեն հայերին անմիջապէս գաղթել Աբարատեան աշխարհը: Միևնոյն ժամանակ Ներսէսը խնդրում էր, որ դաշնադրութեան մէջ մտցնուի, թէ պարսից տէրութիւնը պարտաւորում է վճարել հայերին նրանց թողած անշարժ կայքերի արժէքը:

Այս խնդրի վերաբերութեամբ Պափկեիչի գրած պատասխանի մէջ առուած է, թէ չի կարելի համաձայնեցնել պարսից տէրութեան ընդունել հայերի անշարժ կալուածները, տեղը գրած վճարելով: Իսկ ինչ վերաբերում է մասնաւոր անձերի վրայ ծախսուան, պէտք է ասել, որ եթէ հաշտութիւնը կայանայ, դաշնադրութեան մի կէտում յատկապէս առուած է, թէ այն ամենայն կարգի անձինք, որոնք կը կամենան գաղթել մեր երկիրը, իրաւունք ունեն ծախելու իրենց սեպհական կայքը հինգ տարուայ ընթացքում: Միևնոյն ժամանակ կասկած չայանելով, որ պարսիկները կարող են ճշտութեամբ չկատարել գաղթականութեան մասին

¹⁾ Երեցեան. Կովկասի հայք. Մասն Ա. եր. 315.

դրուած պայմանը, նա յայտնել է ամենքին, որոնք կամենում են անցնել ռուսաց սահմանները, որ աշխատեն գաղթել նախընտրելի ռուսաց զօրքերը կը հեռանան պարսից երկրից 1)։

Վերջապէս 1828 թուի փետրուարի 10-ին կայացաւ Թուրք-մէնչայի դաշնադրութիւնը, որով Երեւանի և Նախիջևանի խանութիւնները դառնում են ռուսաց տէրութեան սեպականութիւն, երկու տէրութեան հպատակներին, որոնք Երասխի այս կամ այն ափում անշարժ կայքեր ունեն, իրաւունք է տրւում երեք տարուայ միջոցում ազատօրէն վաճառելու կամ փոխանակելու։ Շահը կատարեալ և լիակատար թողութիւն է շնորհում Ատրպատական գաւառի բոլոր բնակիչներին և պաշտօնականներին, չմասնելով նրանցից ոչ ոքին հալածանքի կամ նախատինքի, նրանց կարծիքներին, ընթացքի կամ վարքի վերաբերութեամբ, որ ունեցել են պատերազմի ընթացքում կամ ռուսաց զօրքերն այդ գաւառին տիրած միջոցին, նրանց մի տարի ժամանակ է շնորհում իրենց ընտանիքներով ազատօրէն անցնելու պարսից գաւառներից ռուսականը, դուրս տանելու կամ վաճառելու իրենց շարժական կայքերը, իսկ անշարժ կայքերը ծախելու համար տրւում է հինգ տարի ժամանակ 2)։

Այս դաշնադրութեան հիման վրայ Պասկելիւր Ղազար Լազարեանին ստանձնեց գաղթականութեան ղեկավարութիւնը, տալով նրան մանրամասն հրահանգներ։ Սրանց մէջ ասուած էր, որ Լազարեանը պէտք է ընտրէ հարիւրապետներ և յիսնապետներ, որոնց պիտի յանձնարարէ անմիջապէս շրջելու հայերի և այլ քրիստոնեաների բնակավայրերը քարոզելու և ղեկավարելու գաղթականութիւնը։ Պէտք է հաստատապէս իմանան թէ քրիստոնեաներն իսկապէս ցանկանում են գաղթել։ Հարկաւոր չէ ստիպել կամ բռնութիւն դործ դնել գաղթեցնելու համար, այլ հարկաւոր է ազգի նրանց վրայ՝ նկարագրելով այն օգուտները, որ կունենան ընդունելով քրիստոնեայ թաղաւորի հպատակութիւնը, և որ կարող են երջանիկ ու խաղաղ կեանք վարել։ Կարող էք յուսադրել քրիստոնեաներին, ասուած էր հրահանգներում, որ մեր գաւառները գաղթելուց յետոյ վաճառականութեամբ պարապողները կարող են հաստատուել քաղաքներում և այնպէս կառավարուել, ինչպէս տեղական վաճառականները։ Իսկ երկրագործներին բաւականաչափ հողեր կը տրուեն, և վեց տարի հարկից

1) Երեցեան. յիշ. գիրք. եր. 320.

2) Անդ. եր. 321. 3

3) Собрание актовъ относящихся къ обозрѣнію исторіи Армянскаго народа. Ч. I стр. 270—275.

և երեք տարի բեգեառից ազատ կը լինեն: Աշխատել որքան կարելի է շուտ գաղթել, որովհետև ռուսաց զօրքերը հեռանալուց յետոյ պարսիկները կարող են նրանց նեղացնել և արգելել: Ամէն գաղթող գիւղ կարող է իւր կողմից մի երեսփոխան թողնել, որ նա կարողանայ պայմանաւորուած ժամանակամիջոցում ծախել գաղթողներէ անշարժ կայքերը: Գաղթողները պէտք է շարժուեն տեղերից ամբողջ գիւղերով, խումբ-խումբ, ամէն մի խումբը 150—300 գերդաստանից, որոնց առաջնորդելու և պաշտպանելու համար կարգել մի յիսնապետ և 2—5 հեծելազօր: Գաղթողներին խորհուրդ տալ որ գնան առաւելապէս Նախիջևանի և Երևանի դաւառները: Տնանկ գերդաստաններին իբր ճանապարհածախս տալու համար յանձնուած էր Լազարեանին 25,000 բուբլի, յանձնարարելով, որ իւրաքանչիւր գերդաստանին 10 բուբլուց աւելի շտրուի, և այն էլ այն պայմանով, որ ռուսաց սահմանն անցնելուց հինգ տարի յետոյ սկսեն և յաջորդ հինգ տարիներէ ընթացքում մասմաս վճարեն¹⁾:

Այս գաղթականներին տեղաւորեցնելու համար Երևանում կազմուած էր մի յանձնաժողով, որին հրահանգուած էր աշխատել, որ գաղթականները բնակուեն ամբողջ գիւղերով, առանց միմեանցից անջատուելու, այնպէս, ինչպէս բնակուելիս են եղել, իսկ եթէ այդ անկարելի լինի, բնակեցնել մօտակայ գիւղերում: Լեռնային տեղերի բնակիչները պիտի բնակուեն լեռնային տեղերում, դաշտայինները՝ դաշտերում: Կալուածատէրերի հողերում ոչ ոքի չբնակեցնել: Աշխատել, որ գաղթական քրիստոնեաների նոր գիւղերը մահմեդական բնակիչներ էլ չուենան, և քրիստոնեայ ազգաբնակութիւնը առանձին դաւառակներ կամ մահալներ կազմէ: Եթէ բնիկ հայ գիւղերը ազատ հողեր ունենալով ցանկանան իրենց համայնքի մէջ ընդունել և՛ գաղթականներ՝ շարգելել: Գաղթականներին բնակեցնել յարմար և առողջարար վայրերում, ուր կարելի լինի լաւ ջրի պակասութիւն չզգալ, Համոզել գաղթականներին, որ նրանք իրենց տները շինեն ուղիղ գծի վրայ և առնուազը 3 սոսէն լայնութեան փողոցներ թողնեն: Աշխատել, որ գաղթականների նոր շինուելիք տները ջնմանն երկրիս սովորական խրճիթներին, այլ աւելի հաստատուն լինեն և ունենան բոլոր յարմարութիւնները: Իբր օրինակ կարելի է տէրութեան ծախսով մի օրինակելի տուն շինել, տեղական կլիմայի և ունեցած տնտեսական կառավարութեան պահանջներէ համեմատ: Իրենց բնակութեան տեղը հասած, բայց կարգաւորուելու համար միջոց

¹⁾ Նկարագիր գաղթականութեան Հայոց, Մոսկուա. 1832 թ. 70—77.

չունեցող գերդաստաններին գանձարանից 10—20 բուրլի փոխ տալ, տասը տարուայ ընթացքում առանց շահի վերագարձնելու պայմանով: Նաև, եթէ միջոցներ լինեն, արմտիք էլ փոխ տալ՝ մինչև նոր հունձը: Եւ որովհետև Նախիջևանի կողմերը, մանաւանդ Օրդուբադի, Մեղրիի և Ղափանի գաւառակները շատ անմարդաբնակ են, ուստի աշխատել գաղթականների մի մասը այդ կողմերում բնակեցնել¹⁾:

Այս հրահանգները Պասկևիչը ուղարկեց նաև Ներսէս արքեպիսկոպոսին, որի անմիջական իշխանութեան տակ էր գտնուում «գաղթականական յանձնաժողովը»:

Լազարեանն սկսեց գործել. այդ գործի համար նա անզուգական էր, դէպի նա և նրա տոհմը հայերի տածած սէրն ու համակրանքը կատարեալ վստահութիւն էին ներշնչել տալիս. պարսիկներից հազար անգամ խաբուած ժողովրդին: Երբ նա երևեցաւ Թաւրիզում և նշանակուեց քաղաքապետ, Ատրպատականի բոլոր կողմերից հայերը շտապեցին Թաւրէզ, «Լուսաբ զգալուստ ձեր. ցանկացաք զձեզ տեսնել. տեսաք և ուրախ եմք. այլ ընդ ուրախութեանս է մեր յիրաւի և տրամութիւն, և այն ոչ սակաւ: Ունենք զձեզ այժմ՝ երանի թէ յաւիտեան. այլ ճրպէս ի քաղցրութիւն մարդասէր խնամոցն՝ զոր մեզս ցուցանէք, վայելել ունիցին մեր. որդիք՝ ընդ լծով կալով օտարաց ի դարս դարուց: Ոչ կամիմք զրկիլ 'ի ձէնջ ասեմք և 'ի ձերային աստուածատունկ սերնդոց, բարգաւաճելոց ընդ հովանաւոր աջով մեծի կայսեր Նիկողայոսի: Դձուք մեր խնդութիւն տիրապէս: Դուք մեր միակ մխիթար և պարծանք ամենայն տարազրեալ որդւոց թշուառացւոյն Հայաստանի: Ո՛չ մնամք. գնամք յձ և գնաք. հետք մեր՝ ընդ հետս ոտից ձերոց: Միջնորդեցէք առ կայսեր՝ ձեռն կարկառել որորմութեան, և մեք յօժար եմք կալ և մեռանիլ ընդ տէրութեամբ նորա»²⁾:

Ժողովրդի կողմից գաղթելու այսպիսի բուռն ցանկութիւն տեսնելով, Լազարեանը կարծում էր, թէ շատ հեշտ է այս գլուխ բերել, բայ յետոյ, ինչպէս ինքը Լազարեանն է գրում Պասկևիչին, «երբ հասաւ այն տեղը՝ երբ հարկաւոր էր բաժանուել իրենց կայքերից և իրենց աշխատասէր նախնիքների գերեզմաններից, այն նախնիքների, որոնք իրենց ժառանգութիւն էին թողել ընդարձակ և արգաւանդ դաշտեր. և երբ հասաւ շինական կեանքին այնքան յարմարացրուած բազմամեայ շինուածքները

¹⁾ Երիցեան. Կովկասի Հայք. Ա. մասն. եր. 325.

²⁾ Երիցեան. Կովկ. Հայք. Ա. մասն եր. 323.

թողնելու և հաստատուն ներկան անյայտ ապագայի հետ փոխելու ժամը՝ առաջինը նեստորականները կամեցան, որ վճարեն իրենց թողած ամէն բանի արժէքը, յետոյ էլ հայերը խնդրում էին, որ տան իրենց արշարժ կայքերի արժէքի գունէ երրորդ մասը¹⁾, որովհետեւ պարսից տէրութիւնը՝ հակառակ դաշնագրութեան՝ գաղտնի կերպով արգելել էր գնելու գաղթողների անշարժ կայքերը:

Սակայն արգելքները միմիայն հայերի կրած նիւթական գրկանքները չէին, այլ և պարսից կառավարութեան յառաջացրած խոչընդոտները: Պարսից տէրութիւնը տեսնելով, որ իւր ապաստօր հակառակ ահազին բազմութիւն ցանկանում է գաղթել, հասկացաւ, որ միայն նրանց շնորհիւ ծաղկած երկրները պէտք է միանգամայն ամայանան, ուստի և սկսեց քարոզել, որ ուսաց խոստումները խաբեբայութիւն են, որ ուսները սրանց ճորտ կը դարձնեն, սրանցից զինուոր կը վերցնեն. բացի սրանից այդ կառավարութիւնը ինքն էլ իւր կողմից սկսեց խոստումներ անել վեց տարի շարունակ հարկ չառնելու, նիւթական նպաստներ բաժանելու և այլն²⁾, սակայն հայերն ուշադրութիւն չդարձրին: Նոյն իսկ Արթաս-Միրզան Թաւրիզում հրաժարական ողջունի ժամանակ գործ դրեց արեւելեան ճոռոմարանութեան բոլոր ծաղիկները, որպէս զի համոզէ Լազարեանին, որ իւր իշխանութիւնը շարութեամբ գործ չգնէ նրան յարած հայերի մաքերի վրայ ազդելու համար, և որ ներկայ գաղթականութիւնը հայերին ամենաթշուառ դրութեան մէջ պիտի ձգէ: Սակայն Լազարեանը մնաց անդրդուելի, ուստի և՛ Արթաս-Միրզան զիմեց ուրիշ միջոցի. նա մեղադրեց Լազարեանին, իբր թէ նա բռնութեամբ է գաղթեցնում և Մահմէտ Թաքի խանին ուղարկեց, որ վերահսկէ: Լազարեանն էլ առնելով իւր հետ Ուրմիոյ Ասկէր խան կուսակալի որդուն և անգլիացիների գործակալ Վիլլոկին, ինչպէս և միքանի այլ անձնավորութիւններ, շտապով գնաց հասաւ Խոյից մի մզոն հեռավորութեան վրայ գտնուող գաղթականների խմբին և հարցրեց, թէ ինքնակամ են գաղթում, թէ բռնի: Հայերը միաբերան պատասխանեցին, թէ ինքնակամ և թէ չմեղ աւելի լաւ է ուտել ուտների խոտը, քան թէ պարսիկների հացը: Եւ այս վկայութիւնը վաւերացնելով՝ Լազարեանը հազորդեց Արթաս-Միրզին:

¹⁾ Նկար. Գաղթ. Հայոց, եր. 81.

²⁾ Акты археогр. Ком. т. VII. ер. 620.

Մի մեծ արգելք էլ պիտի համարել այն, որ տեղական թուրքերը, մանաւանդ քրդերը, մոլեգնութեամբ էին նայում հայ գաղթողներին, որոնց դառն վաստակը երկար դարեր յափշտակել, վայելել էին, ուստի և՛ սաստիկ հայհոյում էին, քարեր ձգում սրանց վրայ և նոյն իսկ յարմար դէպքերում յարձակւում, կոտորում, թալանում և յետ էին դարձնում: Պարսիկ կառավարութիւնը այս բոլորը թոյլ էր տալիս, յուսալով, որ գուցէ սրանց սպառնալիքը յետ պահէ հայերին, սակայն այս ևս չազդեց, և զարեանը զօրք խնդրեց Պանկրատե զօրապետից և պաշտպանեց գաղթողներին¹⁾:

Սակայն այն ինչ չկարողացան անել պարսից սպառնալիքներն ու խոստումները, արաւ մի հայ եպիսկոպոսի քարոզութիւնը: Սա Սալմաստի ս. Բարդուղիմէոս վանքի վանահայր Իսապէլ եպիսկոպոսն էր, որ այս գաղթականութիւնն ազգակործան էր անուանում և քարոզում էր չգաղթել: Նրա քարոզները շատերին յետ պահեցին գաղթելուց: Ներսէս արք-եպիսկոպոսը իմանալով այդ՝ դիմեց միջանի միջոցների նրան էջմիածին բերել տալու, սակայն չկարողացաւ յաջողացնել, նրա դէմ յուզուած բողոքեց նաև Պասկեիշը եփրեմ կաթուղիկոսին, որպէսզի նրան կարգալուծ անէ, սակայն նա արդէն հասել էր իւր նպատակին և միջանի հազար զերդաստաններ յետ էին կացել գաղթելու մտադրութիւնից:

Լազարեանը ոչ միայն անձամբ շրջեց շատ ու շատ գիւղեր, համոզելով ժողովրդին գաղթելու, այլ և բաւականաչափ օգնականներ ընտրեց՝ գործը կանոնաւոր կերպով ղեկավարելու: Սրանցից նշանաւոր էին. փոխ-գնդապետ իշխ. Մովսէս Զաքարեան Երկայնարագուկ-Արդութեանը, Իսահակ Տէր Առաքելեան Ղամաղեանը, Էնակոլոփեանը, Շարոյեանը, սպաներ՝ Դաւիթ և Աղէքսանդր Ստեփանեան Ղորղանեանները, Շաղուրաթեանը, Մելիք-Շահնազարեանը, Մելիք-Յուսուֆեանը և ուրիշներ: Կային նաև միջանի օտարազգիներ, որոնցից շատերը հայազէտ էին: Մեծապէս օգնեցին գործին իրենց քարոզութեամբ ընդդէմս Ստեփանոս եպիսկոպոսը, Դարարաղցի Նիկողայոս վարդապետը, Գրիգոր վարդապետը և միջանի քահանաներ:

Գաղթականները խումբ խումբ ճանապարհ ընկան 1828 թ. փետրուարի վերջից, սակայն առաջին մեծ խումբը շարժուեցաւ Մարտի 16-ին: Մեծ մասը գնում էր հետի, մանր երեխաներին և միջանի օրուայ պաշար շալակած: Շատ քչերն ունէին զբոստներ և սայլեր, որովհետև երկիրը դեռ ևս ձիւնապատ լինելով անա-

1) Пото. Кавказская война. т. III стр. 731.

սուճանների ուտեստ չէր ճարուում: Ամէն մի խումբ, որ բաղկացած էր միքանի հարիւր հոգուց, ունէր մի վերահսկող և միքանի պահապան զինուորներ: Վերահսկողներից շատերը մարդասիրութեամբ էին վարուում խեղճների հետ, շատ անգամ իրենց ձիերը տալիս էին թոյլ կանանց ու երեխաների ու իրենք հետի էին դնում: Աստիճանաւոր Շարոյեանը իւր հաշւով 100 սոմար հաց դնից Նախիջևանում և բաժանեց խեղճներին:

Ձափազանց սրտաշարժ և սրտաճմլիկ էր նրանց հրաժարականը ծննդավայրերին և ուխտատեղի վանքերին՝ ինչպիսի են Դերէկի ս. Աստուածածին և Աղբակու սուրբ Բարդղիմէոսի վանքերը ¹⁾:

Շատ հանգարտ էին առաջ շարժուում, մի օր զալիս էին, երեք օր հանգստանում:

Վերջապէս անցան Արաքսը և հասան Նախիջևան, սակայն այստեղ հացի սառստիկ պակասութիւն զգացուեց և խեղճ գաղթականները կարծես սովամահ պիտի լինէին, երբ Լազարեանը Խոյից սլացաւ այստեղ մայիսի 19-ին և Թիֆլիսեցի մի հայից 2000 ռակի փոխ առնելով բաժանեց գաղթականներին ու աղատեց նրանց սովից 2): Յետոյ Լազարեան դիմեց Երևանի շաղթականանութեան յանձնաժողովին», փութացնելու օգնութիւնը, սակայն նա պատասխանեց, որ հաց չճարուելու պատճառով չեն կարող օգնել, և որ պէտք է գաղթականներին յետ պահել մինչև նոր հացի հունձը, ապա թէ ոչ նրանք կարող են սովամահ լինել ուսաց սահմաններում: Սակայն արդէն ուշ էր, գաղթականներն արդէն ճանապարհ էին ընկած, ուստի և չափազանց մեծ նեղութիւններ կրեցին, մանաւանդ երբ վրայ հարան անձրևաբեր աշունն ու սաստիկ ձմեռը, երբ գաղթականների մեծ մասը դեռ ևս չունէին բնակարաններ և ոչ էլ ապրուստի միջոց. 45,000 գաղթականներից երկու տարուայ ընթացքում մեռան մօտ 10,000 հոգի, շատերն էլ վերջին յուսահատութեան հասան: Պետութեան տուած նպաստը ընդամէնը կազմում է 84,000 ռ. որից 44,000 ռ. բաժանել էր Լազարեանը, 40,000 էլ գաղթականութեան յանձնաժողովը, այնպէս որ ամեն մի մարդու հասել է հազիւ երկու ռուբլի, այն էլ տասը տարուց յետոյ վերադարձնելու պայմանով 3):

Լազարեանի Պասկևիչին մատուցած տեղեկագրից երևում է, որ գաղթողների ընդհանուր թիւը եղել է 8249 ընտանիք, որ մօ-

¹⁾ Դարբերունի. Ճանապարհորդական նկատողութիւնք. Արարատ 1892 թ. № 3. եր. 214.

²⁾ Նկար գաղթ. հայոց եր. 64.

³⁾ Երիցեան. յ. գ. եր. 336.

տաւորապէս կազմում է 45,000 հոգի, որից մօտ 10,000 հոգին երկու տարուայ ընթացքում պակասել են: Այս զաղթականները եղել են Թաւրիզ քաղաքից և Ուրմիայի, Սալմաստի, Քոյի, Մարաղայի և մասամբ Քաղպինի խանութիւններից: Ռուս կառավարութեան 1829—1881 թուին կազմած աշխարհագիրը ցոյց է տալիս, որ այս զաղթականները վերաբնակուել են.

	Գերդաստ.	հոգի.
Երևան քաղաքում	366	1,715
Երևանի 10 մահալներում	4,193	21,853
Նախիջևան քաղաքում	265	1,110
Նախիջևանի 4 մահալներում	1,872	9,542
Օրդուբադ քաղաքում	36	182
Օրդուբադի շրջակայքում	214	1,158
	6,946	35,560

Բացի սրանցից մի փոքրիկ խումբ էլ վերաբնակուել է Դարբադում:

